վորութեան, առաջի եղեալ նմա զվճիռ դենպետին Դամասկոսի։ Իսկ կուսակալն գրեաց առ դատաւորն Երուսաղէմի, և առաքեաց զայն 'ի ձեռն պաշտօնէին իւրոյ Շահ օղլու կոչեցելոյ, 'ի բաց վանել զՀայս եւ թոյլ տալ Յունաց տօնել զՋատիկն։ Եւ 'ի սոյն աւուրս հասին 'ի Կոստանդինուպօլսոյ Գաբուճի պաշի Խոսրով՝ բերեալ ընդ իւր գիր 'ի մեծէ Եպարքոսէ, և ընդ նմա արք ոմանք 'ի Յունաց, և մատուցեալ զգիրն առ դատաւորն՝ ասէ, Յոյնք ծանուցին զընդդիմութիւնս Հայոց, և նա՝ առ հրովարտակ յԱրքայէ, և ինքն եւս գրեաց զթուղթս, և առաքեաց զիս ընդ ճանապարհին Բերիոյ ընդ արսդ Յունաց։ Իբրեւ տեսին Յոյնք թէ՝ զօրացան յամենայն կողմանց, վերստին ազդ արարին Գրիգորի Պատրիարքի և ասեն՝ եթէ ոչ տօնես ըզՋատիկն ընդ մեզ, ոչ կարես ապրեցուցանել զքեզ և զքոյսդ 'ի ձեռաց մերոց, սպառնացան նաեւ Աստուոց Գրպթոց և Հապեշաց, և նոցա ոչ անսացեալ բանից նոցա, եկին 'ի վանս Հայոց։ Եւ այնուհետեւ սկսան Յոյնք խրոխտանօք շրջիլ 'ի մէջ քաղաքին սրօք եւ բրօք՝ իբրեւ արքունի հրամանաւ, և չարիս հասուցանել Հայոց, իսկ Գրիգոր վերստին գրեաց գիր թախանձանաց առ գլխաւորս ազգին յայլ և այլ կողմանս, այլ վասն կարճութեան ժամանակին՝ ոչ յուստեքէ եհաս նմա օգնութիւն, ապա անհարացեալ ազդ արար քաղաքապետին զստահակութիւնս Յունաց, դիմեաց առ դատաւորն և առ գլխաւորս քաղաքին և ծախեալ զ20,000 դահեկանս հաճեցոյց զմիտս նոցա, խորտակել զստահակութիւնս Յունաց, յորմէ ունէր ծագիլ մեծամեծ խռովութեանց և չարեաց, եթէ ուղիղ էին միտք նոցին՝ ի՞նչ հարկ կայր այսչափ բաղմութեան դիզանիլ 'ի քաղաքիս, պատճառելով զտօն Զատկի։ Իսկ դատաւորն 'ի վերայ այսր արար ժողով մեծ, ուր կոչեցան մեծամեծք և դիտանականք այլազգեաց, իբրեւ 120 ոգեանց, կոչեցան անդ Գրիգոր և փոխանորդն Յունաց Պապա Տիոն, քահանայք Ասորւոց, Գրպթոց և Հապեշաց, եւ 2 Կրօնաւորք 'ի Լատինաց, այլազգի դռնապանք Ս. Յարութեան, եւ այլք։ Եւ դատաւորն մի առ մի հարցանէր նոցա վասն տօնի Զատկին, յետ ընթեռնելոյ զգիր կուսակալին Դամասկոսի, զոր գրեցաք, և նոքա այր իւրաքան-